հանելուկը: Ուրախ էր եւ վախում էր: Նա ա-
բաղացրեց իր քայլերը, անցաւ անտառը, բը-
լուրների վրայից վազելով գնաց եւ՝ երբ հա-
սաւ իր նշանածի տունը, ամէն բան պարզուեց:
Նշանածը այն հրեշտակային էակը չէր, աւա՜ղ,
որին նա երազել էր: Այսօր, նա նրան տգեղ ե-
բեւցաւ, աւելի պառաւ, հոգեկան թռիչքից
զուրկ մի անձնաւորութիւն:

Մարդը հասկացաւ, որ երազած եւ իրա-
կան կանանց միջեւ մեծ տարբերութիւն կայ:

— Ո՜հ, միամիտ մարդ,— փսփսաց նրա
ականջին ճանապարհի երազը,— հասկացիր,
հասկացիր վերջապէս, որ կինը այն չէ ինչ որ
մեզ թւում է: Դու սիրում էիր քո երազդ նրա
մէջ, եւ ես ահա քո երազդ եմ, քեզանից անբա-
ժանելի, քայլիդ հետ քայլ, աչքիդ հետ աչք:

Այդպէս ցեղը քանդակել է մեր մէջ իր
մտքի արձանը:

Մեր երակների, մեր դնդերի եւ մեր սրտի
մէջ ծփում է յիշատակների ովկիանը: Համբ ա-
լիքների կատարին հոգիս տարածում է իր
թաղուած այգին, ու մենք, բնազդօրէն, ձըգ-
տում ենք դէպի երազի մագնիսացած բեւեռը,
դէպի մեր կարելիութիւնների ամբողջական ի-
րականացումը ու զարնւում ենք ժայռերին:

Հրդեհների միջից, ողբերգութիւնների
կենտրոնում կանգնած, մենք որոնում ենք այն
լոյսը, «որը կարելի է յառել մինչեւ վերջը»,
եւ մենք, դժբախտ նշանախօսներս, չենք նըշ-
մարում մեղմաճեմ սիրեցեալը, որ մեր քայլի
հետ քայլ է, աչքի հետ աչք:

Արժէ՞ գնալ Էջմիածին:

* * *

Երեք տարի առաջ, գնացել էի հոգեկան
բոլորովին տարբեր տրամադրութիւններով:

Էջմիածինը ինձ համար պատմութիւն էր,
դեռ ողջ մնացած Զուարթնոց: Մանկական յի-
շատակների հետ խառնուած աւետարանի հե-
ռաւոր բուրում, եպիսկոպոսական փարթամ
շքեղութիւն, կրակի վրայ մատուցուած խունկ,
մելամաղձոտ շարական ու դրա հետ միասին,
գեղագիտական հետաքրքրութիւն՝ Հռիփսի-
մէն, Նաղաշի Նաղշերը, արծաթէ իրերը եւ
կաթողիկոսը:

Էջմիածիր պարզ գիրք էր, որի մէջ մատ-
չելի տառերով ամէն ինչ գրուած էր: Մի տե-
սակ գեղեցիկ առասպել՝ մարած արծաթի վը-
բայ ոսկէ թելերով հիւսուած, թափթփած թե-
ւերով հրեշտակ, սուրբեր —

Այնպէս ինչպէս քեզ գծեցին
Անյայտ ձեռքեր՝
Մաղաղաթի թօշնած կողքին.
Նշանման մեծ աչքերով,
Կարմիր քղամիդ
Լայն ծալքերով
Եւ զօտիով զարդ ի զարդ,
Ուր մեղեսիկ, ուր սուտակ
Վառ են ոժգոյն բոցերով:

Էջմիածինը պատմութիւն էր: Ես էլ հնա-
գէտ եւ գեղագէտ, որ գնում էի գեղեցիկը փնտ-
ռելու անցեալի մէջ:

Երբ հասայ, երեկոյ էր: Մինչ Գարեգին
Սրբազանը իր բնակարանի առջեւ սիրալիր ող-
ջոյն էր տալիս, իր բիբերի մէջ վերաջալոյսը
կայծեր էր գետեղում եւ եկեղեցւոյ խաչը բը-
ռընկել էր ջահի նման:

Գիշերը անցրինք գրքերի շուրջը: Սրբա-
զանը, գիտուն գեղագէտ, հմուտ պատմաբան,
ցոյց էր տալիս իր հսկայ աշխատութիւնները
հայ մանրանկարչութեան շուրջը եւ վեր հա-
նում այն զմայլելի արժէքները, որ մեր նախ-
նիք ստեղծած են եւ որոնք մեզ համար իսկ մը-
նում են մինչեւ հիմա անյայտ: Ու հայ, գեղ-
ջուկ տարազները արհաւիրքներից փախչող կա-
նանց վրայից հանած, միամիտ զարդերը ար-
ծաթի եւ ոսկիի մէջ փորագրուած, գոյնզգոյն
թելերի նրբագին հիւսքը շապիկների վրայ
փունջ փունջ կախուած, աւեր տուների միջից,
մի քիչ բերկրանք ու հմայք էին մատուցում
մեզ, վանական խուցի աղտոտ լամբարի տակ:

Մտածե՛լ, ի՜նչ անողոք բան է գեղեցիկ-
թեան սէրը:

Այստեղ, մի տարի առաջ, մի քանի տաս-
նեակ հազար գաղթականներ, բոլորուած վան-
քի շուրջը սարսափի ճիրանների մէջ տառա-
պում էին. ցրտի, սովի, տենդի դէմ գերմարդ-
կային պայքար մղում, սառը ձիւնի վրայ մեռ-
նում հարիւրներով...

Մահուան այս ողբերգական կարաւանը,
յուսահատ եւ սարսափահար, կանգնել էր այս-
տեղ եւ դղրդիւն հառաչ էր արձակում ճակա-
տագրի դէմ, խուլ ոռնոց, աղմկալից անէծք:
Նա բերել էր իրեն հետ Հայաստանի գաւառ-
ների ահաւոր մահուան յիշատակը, քանդուած

Հայ մատենագրության թուանշանային գրադարան